ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

ՀՐԱՄԱՆ

«02» 12 2022թ. Երևան № 36-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՐՑԱՇԱՐԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի 2022 թվականի նոյեմբերի 29-ի թիվ 35-Լ հրամանի 28-րդ կետը՝

Հրամայում եմ

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող ծառայողների ատեստավորման հարցաշարը՝ համաձայն հավելված 1-ի:
2. Հաստատել Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն կոմիտեում օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող ստորաբաժանման ծառայողների հարցաշարը՝ համաձայն հավելվածի 2-ի:
3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրմանը հաջորդող օրվանից:

Արդարադատության երրորդ դասի
պետական խորհրդական՝ **Ս. Խաչատրյան**

Հավելված 1
ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի
2022 թվականի դեկտեմբերի 02- ի թիվ 36 -Լ հրամանի

ՀԱՐՑԱՇԱՐ
ՀՀ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵՈՒՄ ԻՆՔՆԱՎԱՐ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՈՂ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ (20 ՀԱՐՑ)

1. Օրինականության սկզբունքը
2. Անձի արժանապատվության իրավունքը
3. Կյանքի իրավունքը
4. Խոշտանգման, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի արգելքը
5. Անձնական ազատության սահմանադրական երաշխիքները
6. Խտրականության արգելքը
7. Մասնավոր և ընտանեկան կյանքի, պատվի ու բարի համբավի անձեռնմխելիությունը
8. Բնակարանի անձեռնմխելիությունը
9. Հաղորդակցության ազատությունը և գաղտնիությունը
10. Անձնական տվյալների պաշտպանությունը
11. Մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքը, կարծիքի արտահայտման ազատությունը
12. Հավաքների ազատության և միավորումների ազատության իրավունք
13. Սեփականության իրավունքի սահմանադրական երաշխիքները
14. Իրավաբանական օգնություն ստանալու և արդար դատաքննության իրավունքի սահմանադրական երաշխիքները
15. Վնասի հատուցման իրավունքի սահմանադրական երաշխիքները
16. Անմեղության կանխավարկածը և մեղադրանքից պաշտպանվելու իրավունքը
17. Ցուցմունք տալու պարտականությունից ազատվելու իրավունքը և կրկին դատվելու արգելքը

18. Կրկին անգամ դատվելու արգելքի սահմանադրական երաշխիքները
19. Համաչափության և որոշակիության սահմանադրական սկզբունքները
20. Դատախազության և քննչական մարմինների սահմանադրական երաշխիքները

ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ (40 ՀԱՐՑ)

1. «Հանցանք» հասկացությունը, հատկանիշները, հանցանքների դասակարգումը
2. Հանցակազմի տեսակները, ծանրացնող և մեղմացնող հանգամանքները
3. Շարունակվող և տևող հանցագործությունները
4. Հանցագործությունների համակցությունը, իրական և իդեալական համակցություն
5. Հանցագործությունների ռեցիդիվը
6. Հանցագործության օբյեկտի հասկացությունը, հիմնական և լրացուցիչ օբյեկտները, հանցագործության առարկան
7. Հանցագործության օբյեկտիվ կողմը, հանրորեն վտանգավոր արարք, հետևանքները ու դրանց միջև պատճառական կապը
8. Հանցագործության տեղը, ժամանակը, եղանակը, իրադրությունը, գործիքներն ու միջոցները
9. Հանցագործության սուբյեկտի հասկացությունը և հատկանիշները, տարիքը՝ որպես հանցագործության սուբյեկտի հատկանիշ
10. Հատուկ սուբյեկտի ընդհանուր բնութագիրը
11. Հանցագործության սուբյեկտիվ կողմը, դրա պարտադիր և ֆակուլտատիվ հատկանիշները
12. Դիտավորությունը որպես մեղքի ձև, դրա տեսակները
13. Անզգուշությունը որպես մեղքի ձև, դրա տեսակները
14. Մեղքի երկու ձևով կատարվող հանցագործություններ
15. Սխալը և դրա քրեաիրավական նշանակությունը
16. Հանցափորձը և դրա տեսակները
17. Հանցագործության նախապատրաստությունը

18. Հանցագործությունից կամովին հրաժարվելը

19. Հանցակցության հասկացությունը և ձևերը

20. Հանցակիցների տեսակները, նրանց պատասխանատվությունը, հանցակցի սահմանազանցումը

21. Անհրաժեշտ պաշտպանության հասկացությունը և իրավաչափության պայմանները

22. Հակահիրավական ոտնձգություն կատարած անձին բռնելիս վնաս պատճառելու հասկացությունը և իրավաչափության պայմանները

23. Ծայրահեղ անհրաժեշտության հասկացությունը և իրավաչափության պայմանները

24. Քրեական պատասխանատվությունից ազատելու հիմքերը

25. Խարդախության քրեաիրավական բնութագիրը

26. Վստահված գույքը հափշտակելու քրեաիրավական բնութագիրը

27. Փողերի լվացումը

28. Ընտրակաշառք տալը

29. Ընտրակաշառք ստանալը

30. Հանրաքվեի կամ ընտրության ժամանակ բարեգործության արգելքը խախտելը.

31. Ընտրակաշառքի միջնորդությունը

32. Ապօրինի հարստանալը

33. Պաշտոնատար անձի նկատմամբ ունեցած իրական կամ ենթադրյալ ազդեցությունն օգտագործելը

34. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի կողմից հայտարարագրում կեղծ տվյալներ ներկայացնելը, հայտարարագրման ենթակա տվյալները թաքցնելը կամ հայտարարագիր չներկայացնելը

35. Պաշտոնատար անձի կողմից իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունը չարաշահելը կամ լիազորություններն անցնելը

36. Կաշառք ստանալը, կաշառք տալը.

37. Կաշառքի միջնորդությունը

38. Պաշտոնեական կեղծիքը

39. Ակնհայտ անմեղ անձին քրեական պատասխանատվության ենթարկելը

40. Քրեական պատասխանատվությունից ազատելը

ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ (40 ՀԱՐՑ)

1. Դատախազը՝ որպես քրեական դատավարության սուբյեկտ

2. Քննիչը՝ որպես քրեական դատավարության սուբյեկտ

3. Մեղադրյալը՝ որպես քրեական դատավարության սուբյեկտ

4. Քրեական վարույթին պաշտպանի մասնակցության հիմքերը և պայմանները Պաշտպանի պարտադիր մասնակցությունը

5. Փորձագետը քրեական դատավարությունում

6. Միջնորդության հարուցումը և լուծումը

7. Ապացույցի հասկացությունը, ապացույցների թույլատրելիությունը և վերաբերելիությունը, պատշաճ ապացուցումը

8. Ապացուցման ենթակա փաստական հանգամանքները

9. Վկայի և տուժողի ցուցմունքները

10. Իրեղեն ապացույցի հասկացությունը

11. Ձերբակալման հասկացությունը, ձերբակալման հիմքերն ու ժամկետները.

12. Խափանման միջոցների տեսակները, խափանման միջոցների կիրառման իրավաչափությունը

13. Կալանքը՝ որպես խափանման միջոց, իրավաչափության առանձնահատկությունները, ժամկետները

14. Գրավը՝ որպես ինքնուրույն խափանման միջոցի էությունը, կիրառման հիմքերը

15. Այլընտրանքային խափանման միջոցները (պաշտոնավարման կասեցում, բացակայելու արգելք, երաշխավորություն, դաստիարակչական հսկողություն, զինվորական հսկողություն)

16. Քրեական վարույթ նախաձեռնելը և հիմքերը

17. Քրեական հետապնդումը բացառող հանգամանքները

18. Քրեական վարույթների միացումը և անջատումը

19. Քրեական վարույթ նախաձեռնելու կարգը, քրեական վարույթ չնախաձեռնելը. Օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնի, քննիչի, դատախազի կամ դատավորի հաղորդումը

20. Գույքի արգելադրում

21. Անձի նկատմամբ հանրային քրեական հետապնդումը հարուցելու հիմքը և կարգը. Մեղադրանք ներկայացնելու էությունը և դատավարական կարգը

22. Քննչական գործողությունների կատարման ընդհանուր կանոնները

23. Վկայի և տուժողի հարցաքննության դատավարական կարգը

24. Ձերբակալվածի և մեղադրյալի հարցաքննության էությունը և դատավարական կարգը

25. Զննության հասկացությունը, տեսակները, դատավարական կարգը

26. Առերեսման էությունը, տեսակները և դատավարական կարգը

27. Խուզարկության էությունը, տեսակները և դատավարական կարգը

28. Քննման էությունը և դատավարական կարգը

29. Առգրավման էությունը և դատավարական կարգը

30. Ճանաչման էությունը, տեսակները և դատավարական կարգը

31. Փորձարարության էությունը և դատավարական կարգը

32. Տեղեկատվության պահանջի էությունը և դատավարական կարգը

33. Առարկաներ կամ փաստաթղթեր վերցնելու էությունը և դատավարական կարգը

34. Ցուցմունքը տեղում ստուգելու էությունը և դատավարական կարգը

35. Փորձաքննության կատարելու հիմքը և կատարման դատավարական կարգը

36. Գաղտնի քննչական գործողությունների տեսակները, կատարման հիմքը, պայմանները և իրավաչափության երաշխիքները

37. Հանրային քրեական հետապնդման ժամկետները և դրանք կասեցնելու հիմքերը

38. Նախաքննության ավարտը քրեական վարույթը կարճելով և դրա հիմքերը

39. Համագործակցության վարույթը, դրա նպատակը, կիրառելու հիմքը, ընդհանուր պայմանները

40. Խափանման միջոցների կիրառման դատական երաշխիքները

ԳՈՒՅՔԻ ԲՌՆԱԳԱՆՁՄԱՆ, ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՄԱՆ և ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԻ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ (20 ՀԱՐՑ)

1. Կասկածելի գործարքը կամ գործարար հարաբերությունը, հասկացությունը
2. Նախորդող հանցագործությունը
3. Դրամական փոխանցումը
4. Միանգամյա գործարքը, փոխկապակցված միանգամյա գործարքները.
5. Իրական շահառի հասկացությունը ըստ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի
6. Գործարքի կամ գործարար հարաբերության կասեցումը, դրա իրականացման մերժումը, ինչպես նաև դրա դադարեցումը
7. Գույքի սառեցման հասկացությունը
8. Ֆինանսական դիտարկումների կենտրոնի դերն ու գործառույթները
9. Իրավապահ մարմինների և ֆինանսական դիտարկումների կենտրոնի համագործակցությունը
10. ՀՀ կենտրոնական բանկի կողմից քրեական հետապնդում իրականացնող մարմիններին ծանուցում տրամադրելու կարգը
11. Գույքի հասկացությունը. Անձին պատկանող գույք
12. Ապօրինի ծագում ունեցող գույքի հասկացությունը
13. Օրինական եկամտի հասկացությունն ըստ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի
14. Փոխկապակցված անձ/ իրավաբանական անձի հասկացությունը
15. Մերձավոր ազգականի և ընտանիքի անդամի հասկացությունը
16. Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթը
17. Շուկայականից էականորեն ցածր գնի հասկացությունը
18. Ապօրինի ծագում ունեցող գույքի հետ կապված ուսումնասիրություն սկսելու պարտականությունը

19. Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հետ կապված ուսումնասիրություն սկսելու հիմքերը

20. Ապօրինի ծագում ունեցող գույքի հետ կապված ուսումնասիրություն իրականացնելիս իրավասու մարմնի լիազորությունները

ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԿԱՄ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՈԼՈՐՏՆԵՐ (20 ՀԱՐՑ)

1. Իրավաբանական անձի հասկացությունը
2. Իրավաբանական անձանց տեսակները
3. Իրավաբանական անձի իրավունակությունը
4. Իրավաբանական անձի մարմինները
5. Իրավաբանական անձի պատասխանատվությունը
6. Իրավաբանական անձի լուծարումը
7. Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գույքում մասնակցի բաժնեմասի վրա բռնագանձում տարածելը
8. Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կանոնադրական կապիտալը
9. Հիմնական դրույթներ բաժնետիրական ընկերության մասին
10. Ներկայացուցչություններ, մասնաճյուղեր, հիմնարկներ
11. Դուստր, կախյալ տնտեսական ընկերություններ
12. Ոչ առևտրային կազմակերպություններ
13. Հաշվապահական հաշվառման ոլորտում քաղաքականություն իրականացնող մարմինը
14. Կազմակերպության ղեկավարության իրավունքները և պարտականությունները հաշվապահական հաշվառման կազմակերպման գործում
15. Գլխավոր հաշվապահի իրավունքները և պարտականությունները
16. Հաշվապահական հաշվառման վարման հիմնական կանոնները
17. Սկզբնական հաշվապահական հաշվառման փաստաթղթերը

18. Ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը և կազմը

19. Ֆինանսական հաշվետվություններ կազմելուն ներկայացվող պահանջները

20. Իրավաբանական անձանց լուծարման պետական գրանցումը

ՔՐԵԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ (20 ՀԱՐՑ)

1. Քննչական պլանավորում. Սկզբունքներ, նպատակ, տեսակներ

2. Քննչական վարկածներ, դրանց դասակարգումը և դրանց ստուգմանն ուղղված գործողություններ

3. Հանցագործությունների քննության կազմակերպական և ղեկավարման առանձնահատկությունները

4. Մեղադրյալի քրեագիտական ուսումնասիրումը

5. Դեպքի վայրի զննության տեսակները, կատարման կարգը, մասնակիցները

6. Դեպքի վայրում մարդու հետքերի հայտնաբերման եղանակներն ու ֆիքսումը

7. Հանցագործության հետքերի տեսակները

8. Մարդու ձեռքի և ոտքի հետքերը, մատնահետքերը և այլ հետքեր

9. Փաստաթղթերի քննչական զննության խնդիրները, կատարման կարգը

10. Մեղադրյալի հարցաքննության առանձնահատկությունները, տակտիկական հնարքները

11. Վկայի և տուժողի հարցաքննության տակտիկան

12. Առերեսման մարտավարական առանձնահատկությունները

13. Խուզարկության և առգրավման տակտիկական մարտավարական առանձնահատկությունները

14. Ճանաչման ներկայացնելու տակտիկական առանձնահատկությունները

15. Դատաձեռագրաբանական փորձաքննություն նշանակելու հիմքերը և պարզաբանման ենթակա հարցերը

16. Փաստաթղթերի տեխնիկական հետազոտության վերաբերյալ փորձաքննությունների նշանակելու հիմքերը և պարզաբանման ենթակա հարցերը

17. Համակարգչային տեխնիկայի օգտագործմամբ կատարվող հափշտակությունների քննության մեթոդիկան

18. Կեղծ փողեր կամ արժեթղթեր պատրաստելու, պահելու կամ իրացնելու քննության մեթոդիկան

19. Կաշառք ստանալու և տալու քննության մեթոդիկան

20. Սկզբնական քննչական գործողությունները կաշառքի գործերով

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՀՀ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿԱՄ ԱՅԼ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՏՅԱՆԻ ԿԱՅԱՑՐԱԾ ԱԿՏԵՐ, ՎԵՐԱԲԵՐԵԼԻ ՆԱԽԱԴԵՊԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ (20 ՀԱՐՑ)

1. Եվրոպական դատարանի որոշումների իրավաբանական բնույթը և նշանակությունը ՀՀ իրավական համակարգում.

2. Եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումները կյանքի իրավունքի վերաբերյալ. *(օրինակ՝ Osman v. the United Kingdom, Fernandes de Oliveira v. Portugal, Keller v. Russia, Ուղեցույց մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 2-րդ հոդվածի վերաբերյալ, https://www.echr.coe.int/Documents/Guide_Art_2_HYE.pdf)*

3. Եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումները ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքի վերաբերյալ. ***(օրինակ՝*** *M.A. v. Cyprus, Osypenko v. Ukraine, S., V. and A. v. Denmark, Ուղեցույց մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի վերաբերյալ, https://www.echr.coe.int/Documents/Guide_Art_5_HYE.pdf)*

4. Ձերբակալման և կալանավորման հիմքերը, դրանց ծանոթանալու իրավունքը, անօրինական ձերբակալումը եվ կալանավորումը բողոքարկելու եվ փոխհատուցման իրավունքը

(օրինակ՝https://www.moj.am/storage/files/legal_acts/legal_acts_8322623873131_PIRUZYAN-rev-final-SA.pdf

https://www.moj.am/storage/files/legal_acts/legal_acts_7759915008811_case_of_sefilyan_v_armenia-finalFINAL.pdf)

5. Խոշտանգումների արգելքի վերաբերյալ Եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումները. *(օրինակ՝ Փիրուզյանն ընդդեմ Հայաստանի գանգատ 33376/07, Վիրաբյանն ընդդեմ Հայաստանի գանգատ 40094/05, Կարապետյանն ընդդեմ Հայաստանի գանգատ 22387/05, Հարությունյանն ընդդեմ Հայաստանի գանգատ 34334/04, Կորսակովը ընդդեմ Մոլդովայի, Սալմանը ընդդեմ Թուրքիայի գործերով Եվրոպական դատարանի որոշումներ, Էրիկ Եղինյանի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ԼԴ1/0030/01/16 որոշումը)*

6. Արդար դատաքննության իրավունքի վերաբերյալ Եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումները *(օրինակ՝ De Haes and Gijsels v. Belgium, Dombo Beheer B.V. v. Netherlands, Yvon v. France, Ramanauskas v. Lithuania, Bannikova v. Russia) Ուղեցույց մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի վերաբերյալ, https://www.echr.coe.int/Documents/Guide_Art_6_criminal_HYE.pdf),*

7. Քրեական մեղադրանք հասկացությունը. *(օրինակ՝ Deweer v. Belgium, Eckle v. Germany, Shabelnik v. Ukraine, https://www.echr.coe.int/Documents/Guide_Art_6_criminal_HYE.pdf)*

8. ՄԻԵԿ-ի իմաստով «ողջամիտ ժամկետ» հասկացությունը *(օրինակ՝ Wemhoff v. Germany, § 18; Kart v. Turkey, ուղեցույց մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի վերաբերյալ, 2019 թվական https://www.echr.coe.int/Documents/Guide_Art_6_criminal_HYE.pdf)*

9. Անմեղության կանխավարկած. *(օրինակ՝ Salabiaku v. France, Pham Hoang v. France, Virabyan v. Armenia, Արմեն Բաբայանի և Սուրեն Թումանյանի վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանի 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԷԴ/0044/01/11 որոշում)*

10. Մեղադրյալի նվազագույն իրավունքները. *(օրինակ՝ Pellisier and Sassi v. France, Համայակ Սահակյանի գործով Վճռաբեկ դատարանի 2011 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ ԼԴ/0212/01/10 որոշում, Սարիբեկ Հարությունյանի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի 2014 թվականի մայիսի 31-ի թիվ ԵԱՔԴ/0189/01/12 որոշում, Avagyan v. Armenia)*

11. Մեղադրյալին հասկանալի լեզվով, անհապաղ եվ հանգամանորեն մեղադրանքի բնույթի եվ հիմքերի մասին տեղեկացնելը *(օրինակ՝ Pellisier and Sassi v. France, Բրոզիչեկն*

ընդդեմ Իտալիայի, ուղեցույց մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի վերաբերյալ, 2019 թվական https://www.echr.coe.int/Documents/Guide_Art_6_criminal_HYE.pdf)

12. Լռելու և սեփական անձի դեմ ցուցմունք չտալու իրավունք *(օրինակ՝ saunders v. united kingdom, ուղեցույց մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի վերաբերյալ, 2019 թվական https://www.echr.coe.int/Documents/Guide_Art_6_criminal_HYE.pdf)*

13. Հակընդդեմ հարցման իրավունք. *(օրինակ՝ Al-Khawaja and Tahery v. the United Kingdom [GC], § 118, ուղեցույց մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի վերաբերյալ 2019 թվական https://www.echr.coe.int/documents/guide_art_6_criminal_hye.pdf)*

14. առաջադրված մեղադրանքին ծանոթանալու, պաշտպանության, հակընդդեմ հարցաքննության իրավունք – 6-րդ հոդված *(օրինակ՝ https://www.moj.am/storage/files/legal_acts/legal_acts_6542236108971_GABRIELYAN_HYE_.pdf, https://www.moj.am/storage/files/legal_acts/legal_acts_9278252_10.pdf)*

15. Բավարար ժամանակ ու հնարավորություններ՝ իր պաշտպանությունը նախապատրաստելու համար *(օրինակ՝ mayzit v. russia, can v. austria, commission report, § 53; gregačević v. croatia, § 51, ուղեցույց մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի վերաբերյալ 2019 թվական https://www.echr.coe.int/documents/guide_art_6_criminal_hye.pdf)*

16. Անձամբ կամ իրավաբանական աջակցության միջոցով իրեն պաշտպանելու իրավունքը *(օրինակ՝ Pakelli v. Germany. Salduz v. Turkey, ուղեցույց մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի վերաբերյալ 2019 թվական https://www.echr.coe.int/documents/guide_art_6_criminal_hye.pdf)*

17. Թարգմանչի ծառայությունից օգտվելու իրավունք *(Օրինակ՝ Baytar v. turkey ուղեցույց մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի վերաբերյալ, 2019 թվական https://www.echr.coe.int/documents/guide_art_6_criminal_hye.pdf)*

18. Ըստ ՄԻԵԿ-ին կից 7-րդ արձանագրության 4-րդ հոդվածի՝ կրկին չդատվելու, չպատժվելու իրավունքը սահմանող դրույթները.

19. ՄԻԵԿ-ի 1-ին արձանագրության 1-ին հոդվածի համաձայն՝ անձին սեփականությունից զրկելու իրավակարգավորումները.

20. Իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք – 13-րդ հոդված

8. ՔՐԵԱՀԻՐԱՎԱԿԱՆ և ՔՐԵԱԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԴԵՊԱՅԻՆ և ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ (20 ՀԱՐՑ)

1. Խուզարկության կատարման փաստական և իրավական հիմքերը. (Վճռաբեկ դատարանի Սեպուհ Թադևոսյանի և Սիրուն Նաջարյանի ԵՇԴ/0073/07/15 որոշում https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=105504)

2. Դատավարության լեզուն (Վճռաբեկ դատարանի Գևորգ Խաչատրյանի և Սամվել Քրմոյանի վերաբերյալ ԵԿԴ/0059/01/14 որոշում https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=108971)

3. Ապացույցների բավարարությունը. (Վճռաբեկ դատարանի Արարատ Ավագյանի և Վահան Սահակյանի վերաբերյալ ԵԿԴ/0252/01/13 որոշում https://www.arlis.am/documentview.aspx?docID=95718)

4. «Պաշտոնական փաստաթուղթ» հասկացության և քրեաիրավական նշանակության մեկնաբանումը. (Վճռաբեկ դատարանի Սամվել Սիրեկանի Պապիկյանի և Արարատ Թորգոմի Սարգսյանի վերաբերյալ ԱՐԴ/0116/01/15 որոշում https://www.arlis.am/documentview.aspx?docID=117520)

5. Հանցավոր ճանապարհով ստացված գույքն օրինականացնելու (փողերի լվացման) *հանցակազմը. (*Վճռաբեկ դատարանի *Աշոտ Սուքիասյանի վերաբերյալ գործով 2021թ. ապրիլի 14-ի ԵԷԴ/0054/01/15 որոշում)*

6. *Հակընդդեմ հարցում (*Վճռաբեկ դատարանի *Վ. Մաթևոսյանի վերաբերյալ գործով 2019թ. ապրիլի 11-ի ՇԴ3/0066/01/16 որոշում)*

7. «Հեռախոսային խոսակցությունների վերահսկում» օպերատիվ-հետախուզական միջոցառման, այդ միջոցառման կատարման արդյունքում ձեռք բերված ապացույցների *(Վճռաբեկ դատարանի Սամվել Բաբայանի, Արմեն Պողոսյանի և*

Սանասար Գաբրիելյանի վերաբերյալ ԵԿԴ/0189/01/17 որոշում https://www.arlis.am/documentview.aspx?docID=127344*)*

8. Կաշառք ստանալու հանցակազմի հատկանիշները. *(Վճռաբեկ դատարանի Ալեքսանդր Այվազյանի, Քրիստինա Ջամալյանի և Էդգար Ջամալյանի վերաբերյալ ԵԷԴ/0040/01/16 որոշում* https://www.arlis.am/documentview.aspx?docID=133945 *)*

9. Մասնավոր անձի կողմից ձայնագրառման վերաբերյալ. (Վճռաբեկ դատարանի Վահիկ Մխիթարյանի վերաբերյալ ԼԴ/0002/01/18 որոշում https://www.arlis.am/documentView.aspx?docID=139678)

10. Ներքին դիտում օպերատիվ-հետախուզական միջոցառման վերաբերյալ *(Վճռաբեկ դատարանի Գոռ Սարգսյանի վերաբերյալ ԵԿԴ/0229/01/16 որոշում https://www.arlis.am/documentView.aspx?docID=139675)*

11. Գույքի վրա կալանք դնել (*Վճռաբեկ դատարանի՝ Ս. Մայրապետյանի վերաբերյալ գործով 2019թ. դեկտեմբերի 20-ի ԵԴ/0587/11/18 որոշում)*

12. Քրեական գործի վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին (ՍԴՈ-1213

https://www.arlis.am/documentview.aspx?docID=98224)

13. Քրեադատավարական օրենքի էական խախտում (ՍԴՈ-1295- https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=108066)

14. Կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ կալանավորման ժամկետը երկարացնելու մասին միջնորդությունների քննումը (ՍԴՈ-1373

https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=114101)

15. Օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին միջնորդությունների քննարկման կարգը (ՍԴՈ – 926

https://www.arlis.am/documentview.aspx?docid=63142)

16. Անձին ճանաչման ներկայացնելը (ՍԴՈ- 923

https://www.arlis.am/documentview.aspx?docID=62526)

17. Քրեական գործի վարույթը կամ քրեական հետապնդումը բացառող հանգամանքները (ՍԴՈ- 1358 https://www.arlis.am/documentview.aspx?docid=112434)

18. Կրկին դատվելու անթույլատրելության սկզբունքը (ՍԴՈ- 1348

https://www.arlis.am/documentview.aspx?docid=111660)

19. Ակնհայտ անմեղ անձին քրեական պատասխանատվության ենթարկելը (ՍԴՈ-1377 https://www.arlis.am/documentview.aspx?docid=116052)

20. Ապօրինի հարստացման վերաբերյալ (ՍԴՈ-1453 https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=129918)

Հավելված 2
ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի
2022 թվականի դեկտեմբերի 02- ի թիվ 36 -Լ հրամանի

ՀԱՐՑԱՇԱՐ
ՀՀ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻՈՒՄ ՕՊԵՐԱՏԻՎ-ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ (10 ՀԱՐՑ)

1. Օրինականության սկզբունքը
2. Կյանքի իրավունքը
3. Խտրականության արգելքը
4. Խոշտանգման, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի արգելքը
5. Անձնական ազատության սահմանադրական երաշխիքները
6. Մասնավոր և ընտանեկան կյանքի, պատվի ու բարի համբավի անձեռնմխելիությունը
7. Բնակարանի անձեռնմխելիությունը
8. Հաղորդակցության ազատությունը և գաղտնիությունը
9. Անձնական տվյալների պաշտպանությունը
10. Ազատ տեղաշարժվելու իրավունքը

ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ (30 ՀԱՐՑ)

1. «Հանցանք» հասկացությունը, հատկանիշները, հանցանքների դասակարգումը
2. Հանցակազմի տեսակները, ծանրացնող և մեղմացնող հանգամանքները
3. Հանցագործության օբյեկտի հասկացությունը, հիմնական և լրացուցիչ օբյեկտները, հանցագործության առարկան
4. Հանցագործության օբյեկտիվ կողմը, հանրորեն վտանգավոր արարքը, հետևանքները ու դրանց միջև պատճառական կապը
5. Հանցագործության տեղը, ժամանակը, եղանակը, իրադրությունը, գործիքներն ու միջոցները
6. Հանցագործության սուբյեկտի հասկացությունը և հատկանիշները
7. Հատուկ սուբյեկտի ընդհանուր բնութագիրը
8. Հանցագործության սուբյեկտիվ կողմը, դրա պարտադիր և ֆակուլտատիվ հատկանիշները
9. Դիտավորությունը որպես մեղքի ձև, դրա տեսակները
10. Անզգուշությունը որպես մեղքի ձև, դրա տեսակները
11. Հանցափորձը և դրա տեսակները
12. Հանցագործության նախապատրաստությունը
13. Հանցագործությունից կամովին հրաժարվելը
14. Հանցագործության փուլերի հասկացությունը և տեսակները, ավարտված և չավարտված հանցագործություններ
15. Անհրաժեշտ պաշտպանության հասկացությունը և իրավաչափության պայմանները
16. Հակահիրավական ոտնձգություն կատարած անձին բռնելիս վնաս պատճառելու հասկացությունը և իրավաչափության պայմանները
17. Ծայրահեղ անհրաժեշտության հասկացությունը և իրավաչափության պայմանները
18. Քրեական պատասխանատվությունից ազատելու հիմքերը
19. Ընտրակաշառք տալը, ընտրակաշառք ստանալը
20. Հանրաքվեի և ընտրության ժամանակ բարեգործության արգելքը խախտելը

21. Ապօրինի հարստանալը

22. Փողերի լվացումը և դրա տեսակները

23. Հանրային ծառայության շահերի դեմ ուղղված հանցագործությունների սուբյեկտ՝ պաշտոնատար անձի հասկացությունը

24. Պաշտոնատար անձի կողմից իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունը չարաշահելը կամ լիազորություններն անցնելը

25. Պաշտոնատար անձի կողմից ձեռնարկատիրական գործունեությանն ապօրինի մասնակցելը

26. Կաշառք ստանալը և տալը

27. Պաշտոնատար անձի նկատմամբ ունեցած իրական կամ ենթադրյալ ազդեցությունն օգտագործելը, այդ նպատակով ապօրինի վարձատրություն տալը

28. Պաշտոնեական կեղծիքը

29. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի կողմից հայտարարագրում կեղծ տվյալներ ներկայացնելը, հայտարարագրման ենթակա տվյալները թաքցնելը կամ հայտարարագիր չներկայացնելը

30. Արդարադատության իրականացմանը և գործի քննությանը միջամտելը

ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ (30 ՀԱՐՑ)

1. Անմեղության կանխավարկածը
2. Մինչդատական վարույթի դատական երաշխիքները
3. Դատախազը: Նրա լիազորությունները մինչդատական վարույթում
4. Քննիչը, նրա լիազորությունները
5. Հետաքննության մարմնի լիազորությունները
6. Վարույթի հանրային մասնակիցների փոխհարաբերությունները
7. Տուժողը, նրա իրավունքների և պարտականությունների ընդհանուր բնութագիրը, տուժողի հարցաքննությունը
8. Ձերբակալվածի իրավունքները և պարտականությունները,

9. Ձերբակալվածի հարցաքննությունը

10. Պաշտպանը որպես դատավարական սուբյեկտ. Պաշտպանի իրավունքներն ու պարտականությունները

11. Վկան որպես վարույթին օժանդակող անձ, վկայի հարցաքննությունը

12. Ապացույցների հասկացությունը, ապացույցների թույլատրելիությունը և դրանց օգտագործման սահմանափակումները

13. Խափանման միջոցների տեսակները, խափանման միջոցների կիրառման իրավաչափությունը

14. Ձերբակալման հասկացությունը, տեսակները և դատավարական կարգը

15. Ձերբակալման հասկացությունը. Ձերբակալման հիմքերն ու ժամկետները

16. Վարույթն իրականացնող մարմին հարկադրաբար ներկայացնելը որպես դատավարական սանկցիա

17. Քրեական վարույթ նախաձեռնելը: Քրեական վարույթ նախաձեռնելու առիթները, հիմքերը

18. Քրեական վարույթ նախձեռնելու կարգը, քրեական վարույթ չնախաձեռնելը. Օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնի, քննիչի, դատախազի կամ դատավորի հաղորդումը

19. Քրեական հետապնդումը բացառող հանգամանքները

20. Հետաքննություն կատարելու հիմքը, սկիզբն ու ավարտը

21. Թվային, այդ թվում հեռախոսային հաղորդակցությունների վերահսկման էությունը և դատավարական կարգը

22. Նամակագրության և այլ ոչ թվային հաղորդակցության վերահսկման էությունը և դատավարական կարգը

23. Ֆինանսական գործարքների վերահսկման էությունը և դատավարական կարգը

24. Խուզարկության էությունը, տեսակները և դատավարական կարգը

25. Ներքին դիտման էությունը և դատավարական կարգը

26. Արտաքին դիտման էությունը և դատավարական կարգը

27. Կաշառք ստանալու կամ կաշառք տալու նմանակման էությունը և դատավարական կարգը

28. Գաղտնի քննչական գործողությունների տեսակները, կատարման հիմքը և պայմանները

29. Գաղտնի քննչական գործողությունների իրավաչափության երաշխիքները

30. Գաղտնի քննչական գործողություն կատարելու վերաբերյալ միջնորդությունը և դրա քննությունը դատարանում

ԳՈՒՅՔԻ ԲՌՆԱԳԱՆՁՄԱՆ, ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՄԱՆ և ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԻ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ (10 ՀԱՐՑ)

1. Կասկածելի գործարքը կամ գործարար հարաբերությունը, հասկացությունը
2. Կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության չափանիշը.
3. Նախորդող հանցագործությունը.
4. Դրամական փոխանցումը.
5. Բարձր ռիսկի չափանիշը.
6. Դրամական փոխանցումների հետ կապված պարտականությունները
7. Փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման մեջ ներգրավվածության համար իրավաբանական անձանց նկատմամբ կիրառվող պատասխանատվությունը.
8. Իրավապահ մարմինների և ֆինանսական դիտարկումների կենտրոնի համագործակցությունը.
9. ՀՀ կենտրոնական բանկի կողմից քրեական հետապնդում իրականացնող մարմիններին ծանուցում տրամադրելու կարգը.
10. ՀՀ կենտրոնական բանկի իրավասությունը՝ պետական, այդ թվում՝ վերահսկող և քրեական հետապնդում իրականացնող մարմիններից օրենքի նպատակներից բխող տեղեկություններ (ներառյալ՝ փաստաթղթեր), այդ թվում՝ օրենքով սահմանված գաղտնիք պարունակող տեղեկություններ պահանջելու տեսանկյունից

ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ և ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐ (20 ՀԱՐՑ)

1. Իրավաբանական անձի հասկացությունը և տեսակները
2. Իրավաբանական անձի իրավունակությունը
3. Իրավաբանական անձի մարմինները
4. Իրավաբանական անձի պատասխանատվությունը
5. Իրավաբանական անձի լուծարումը
6. Հիմնական դրույթներ բաժնետիրական ընկերության մասին
7. Ներկայացուցչություններ, մասնաճյուղեր, հիմնարկներ
8. Դուստր, կախյալ տնտեսական ընկերություններ
9. Ոչ առևտրային կազմակերպություններ
10. Իրավաբանական անձանց լուծարման պետական գրանցումը
11. Ձեռնարկատիրական գործունեության հատկանիշները, իրականացման համար անհրաժեշտ պայմանները
12. Լիցենզավորվող գործունեության տեսակները, լիցենզիայի տրամադրման կարգը, ժամկետները
13. Առևտրային և ոչ առևտրային կազմակերպություններում, հիմնարկներում ստուգումներ իրականացնող պետական մարմիններն ու նրանց գործառույթները
14. Առևտրային և ոչ առևտրային կազմակերպություններում, հիմնարկներում ստուգումների նպատակը և անցկացման կարգը
15. Հայաստանի Հանրապետությունում կիրառվող հարկերի տեսակներն ու հարկման համակարգերը
16. Գլխավոր հաշվապահի իրավունքները և պարտականությունները
17. Հաշվապահական հաշվառման ոլորտում քաղաքականություն իրականացնող մարմինը
18. Հաշվապահական հաշվառման էությունն ու վարումը
19. Հաշվապահական հաշվառման վարման կանոնները
20. Սկզբնական հաշվապահական հաշվառման փաստաթղթերի հասկացությունը և վավերապայմանները

ՕՊԵՐԱՏԻՎ-ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ (50 ՀԱՐՑ)

1. Պետական և ծառայողական գաղտնիքի հասկացությունը, գաղտնիության աստիճանները և դրանց հասկացությունները
2. Պետական գաղտնիք կազմող տեղեկությունների պաշտպանությունը
3. Տեղեկությունները պետական և ծառայողական գաղտնիքի շարքին դասելը
4. Օպերատիվ-հետախուզական գործունեության հասկացությունը
5. Օպերատիվ-հետախուզական միջոցառման հասկացությունը
6. Օպերատիվ-հետախուզական գործունեության իրավական կարգավորումը
7. Օպերատիվ-հետախուզական գործունեության նպատակները
8. Օպերատիվ-հետախուզական գործունեության բացահայտ և գաղտնի մեթոդների ու միջոցների համակցությունը
9. Օպերատիվ-հետախուզական գործունեության կանխատեսումը
10. Օպերատիվ-հետախուզական գործունեության սկզբունքները
11. Մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների պաշտպանությունը օպերատիվ-հետախուզական գործունեության իրականացման ընթացքում
12. Օպերատիվ-հետախուզական գործունեության բազմակողմանիությունը, լրիվությունը և օբյեկտիվությունը
13. Օպերատիվ-հետախուզական գործունեության ընթացքում կիրառվող հատուկ տեխնիկական միջոցները
14. Օպերատիվ-հետախուզական գործունեության տեղեկատվական ապահովումը և փաստաթղթավորումը
15. Օպերատիվ-հետախուզական գործունեության փաստաթղթավորման նպատակները և խնդիրները
16. Օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքները քրեական վարույթն իրականացնող մարմիններին փոխանցելու կարգը
17. Օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքների ամրագրումը
18. Օպերատիվ-հետախուզական միջոցառումների անցկացման ժամկետները

19. Օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող պետական մարմինները և նրանց գործառույթները

20. Օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների պարտականությունները

21. Օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացման սահմանափակումները

22. Օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների իրավունքները

23. Օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների հետ համագործակցող անձինք, նրանց սոցիալական և իրավական պաշտպանությունը

24. Օպերատիվ-հետախուզական միջոցառումների տեսակները

25. Օպերատիվ-հետախուզական միջոցառումների անցկացման հիմքերը

26. Օպերատիվ-հետախուզական միջոցառումների անցկացման պայմանները

27. Օպերատիվ-հետախուզական միջոցառումների անցկացմանը ներկայացվող ընդհանուր պահանջները

28. Օպերատիվ-հետախուզական միջոցառումների հետևանքով ստացված նյութերի և փաստաթղթերի հրապարակայնությունը

29. «Թվային, այդ թվում՝ հեռախոսային հաղորդակցության վերահսկումը» օպերատիվ-հետախուզական միջոցառման անցկացման ընթացակարգը

30. Օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքների օգտագործումը

31. Ընդհանուր վերահսկողությունը օպերատիվ-հետախուզական գործունեության նկատմամբ

32. Անմիջական վերահսկողությունը օպերատիվ-հետախուզական գործունեության նկատմամբ

33. Օպերատիվ-հետախուզական միջոցառում անցկացնելու թույլտվություն ստանալու վերաբերյալ պատճառաբանված միջնորդությունը և դրա քննարկման կարգը

34. Դատարանում օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին միջնորդությունների քննարկման կարգը

35. Օպերատիվ-հետախուզական միջոցառում անցկացնելու մասին օպերատիվ ստորաբաժանման ղեկավարի որոշման հիմքերը

36. Դատական վերահսկողությունը օպերատիվ-հետախուզական գործունեության նկատմամբ

37. Դատախազական հսկողությունը օպերատիվ-հետախուզական գործունեության նկատմամբ

38. Դատարանի թույլտվությամբ իրականացվող օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրավաչափության երաշխիքները

39. Օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների անօրինական և անհիմն որոշումների և գործողությունների բողոքարկումը դատարան

40. Օպերատիվ-հետախուզական գործունեության իրականացման ժամանակ մասնավոր և ընտանեկան կյանքի գաղտնիության պահպանումը

41. Հետաքննության և նախաքննության փոխհամագործակցությունը առերևույթ հանցագործությունների բացահայտման ընթացքում

42. Առերևույթ հանցագործությունների բացահայտման ընթացքում օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնի լիազորությունները

43. Առերևույթ հանցագործությունների բացահայտման ընթացքում օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնի կողմից իրականացվող գաղտնի քննչական գործողությունների կատարման հիմքը և պայմանները

44. Առերևույթ հանցագործությունների բացահայտման ընթացքում օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնի կողմից իրականացվող գաղտնի քննչական գործողությունների արդյունքները վարույթ իրականացնող մարմնին փոխանցելու կարգը

45. Օպերատիվ հարցում և օպերատիվ տեղեկությունների ձեռքբերում օպերատիվ-հետախուզական միջոցառումների էությունը և ընթացակարգը

46. Համեմատական հետազոտումների նմուշների հավաքում, իրերի և փաստաթղթերի հետազոտում, անձի նույնացում օպերատիվ-հետախուզական միջոցառումների էությունը և ընթացակարգը

47. Վկաների և ազդարարների պաշտպանության կազմակերպումը

48. Առերևույթ հանցագործությունների բացահայտման ընթացքում օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնի կողմից իրականացվող գաղտնի քննչական գործողությունների իրավաչափության երաշխիքները

49. Տեղեկությունների գաղտնազերծումը

50. Շենքերի, կառույցների, տեղանքի, շինությունների և տրանսպորտային միջոցների հետազոտում, օպերատիվ ներդրում, օպերատիվ փորձարարություն օպերատիվ-հետախուզական միջոցառումների էությունը և ընթացակարգը